Նախագիծ

Լրամշակված տարբերակ

Երկրորդ ընթերցում

Պ-350[10]-02.08.2022-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգրքի) 160-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 160. Զենքի, դրա հիմնական բաղկացուցի մասերի և փամփուշտների վաճառքի կարգը խախտելը**

1. Քաղաքացիական և ծառայողական զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կողմից զենք ձեռք բերելու թույլտվություն չունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց զենք վաճառելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով.

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով:

3. Վաճառակետերում զենքի պահպանման անվտանգության կանոնների պահպանման խախտելն առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

5. Զենքի վաճառքի գործունեության կազմակերպման լիցենզիայի պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դրանք չեն առաջացրել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:

Հոդված 2. Օրենսգրքի 190-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 190. Զենք ձեռք բերելու կամ վաճառելու կարգը խախտելը**.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից զենք ձեռք բերելը կամ վաճառելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ զենքի առգրավմամբ կամ առանց դրա:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ զենքի առգրավմամբ:

Հոդված 3. Օրենսգրքի 191-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 191. Զենքը կամ ռազմամթերքը պահելու, տեղափոխելու (փոխադրելու) , կրելու կամ օգտագործելու կանոնները խախտելը

1. Զենք պահելու և կրելու, պահելու և օգտագործելու, հավաքածուներ կազմելու թույլտվություններ ունեցող քաղաքացիների կողմից զենքը կամ ռազմամթերքը պահելու, տեղափոխելու (փոխադրելու), կրելու կամ օգտագործելու կանոնները խախտելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ զենքի վերցմամբ կամ առանց դրա:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ զենքի և ռազմամթերքի առգրավմամբ:

3. Զենքը և ռազմամթերքը պահելու, տեղափոխելու (փոխադրելու), կրելու կամ օգտագործելու կանոնները իրավաբանական անձանց այն աշխատողների կողմից խախտելը, որոնք պատասխանատու են դրանց անվթարության համար, նրանց կողմից զենքը և ռազմամթերքը ոչ ըստ նպատակի օգտագործելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ զենքի վերցմամբ կամ առանց դրա:

4. Սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝
առաջացնում են տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ զենքի և ռազմամթերքի առգրավմամբ:

Հոդված 4. Օրենսգրքի 192-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 192. Հրազենի գրանցման (վերագրանցման) ժամկետները կամ հաշվառման վերցնելու կանոնները խախտելը**

Ֆիզիկական անձանց կողմից բնակության վայրը փոխելիս, իսկ իրավաբանական անձանց կողմից հաշվառման վայրը փոխելիս հրազենի գրանցման (վերագրանցման) սահմանված ժամկետները խախտելը կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում այն հաշվառման վերցնելու կանոնները խախտելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր միավոր հրազենի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 193-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 193. զենքը և ռազմամթերքն իրացնելուց խուսափելը**

Զենքը և ռազմամթերքն իրացնելուց այն քաղաքացիների խուսափելը, որոնց զենք պահելու և կրելու, պահելու և օգտագործելու, հավաքածուներ կազմելու թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվել օրենքով սահմանված կարգով՝ առաջացնում է տուգանքի

նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով՝ զենքի և ռազմամթերքի առգրավմամբ»:

Հոդված 6. Օրենսգրքում լրացնել նոր՝ 193. 1 հոդված հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 193. 1. Հրաձգարան գործարկելն առանց համապատասխան լիզենզիա, իրավական ակտերի խախտմամբ կահավորելը եւ անվտանգության կանոնները խախտելը**

1. Առանց լիցենզիայի հրաձգարան գործարկելն առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

2. Օրենսդրությամբ նախատեսված կարգի խախտմամբ հրաձգարան սարքավորելը առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

4. Հրաձգարանում քաղաքացու կողմից զենք պահելու և կրելու, այլ անձի փոխանցելու կանոնները խախտելն առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

5. Սույն հոդվածի չորրորդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ զենքի առգրավմամբ կամ առանց դրա:

6. Իրավաբանական անձի, իրավաբանական անձի աշխատողների կողմից հրաձգարանում, զենքի ուսուցման, պահելու և կրելու, այլ անձի փոխանցելու կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանք նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

7. Սույն հոդվածի վեցերորդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

8. Հրաձգարանի գործարկման գործունեության կազմակերպման լիցենզիայի պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դրանք չեն առաջացրել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հա
ոյուրհիսնապատիկի չափով:

Հոդված 7. Օրենսգրքում լրացնել նոր՝ 193. 2 հոդված հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 193. 2. Զենքի հարդարման վերաբերյալ սահմանված նորմերը խախտելը**

Զենքի հարդարման գործունեության կազմակերպման լիցենզիայի պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դրանք չեն առաջացրել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:»:

Հոդված 8. Օրենսգրքում լրացնել նոր՝ 193. 3 հոդված հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 193. 3. Քաղաքացիական և ծառայողական զենքի արտադրության վերաբերյալ սահմանված նորմերը խախտելը

Քաղաքացիական և ծառայողական զենքի արտադրության գործունեության կազմակերպման լիցենզիայի պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դրանք չեն առաջացրել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 9. Օրենսգրքի 264-րդ հոդվածը «191» թվից հետո հանել «հոդվածի առաջին և երկրորդ մասերով» բառերը:

Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ սույնն օրենքի 6-րդ հոդվածի որն ուժի մեջ է մտնում սույն օրենքը պաշտոնական հրապարակումից երկու ամիս հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

~~Հոդված 160. Ողորկափող որսորդական հրազենի վաճառքի կարգը խախտելը~~

~~Առևտրական ձեռնարկությունների (կազմակերպությունների) աշխատողների կողմից ներքին գործերի մարմինների թույլտվություն չունեցող քաղաքացիներին, ձեռնարկություններին, հիմնարկներին և կազմակերպություններին ողորկափող որսորդական հրազեն և զինամթերք վաճառելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսուն տոկոսից մինչև հիսուն տոկոսի չափով:~~

~~Նույն գործողությունները այն անձի կողմից կատարելը, որը նշված խախտման համար վարչական տույժի է ենթարկվել մեկ տարվա ընթացքում՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսուն տոկոսից մինչև դրա լրիվ չափը:~~

~~*(160-րդ հոդվածը խմբ. 02.09.93 ՀՕ-79)*~~

«Հոդված 160. Զենքի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի և փամփուշտների վաճառքի կարգը խախտելը

1. Քաղաքացիական և ծառայողական զենքի առևտրի լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց կողմից զենք ձեռք բերելու թույլտվություն չունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց զենք վաճառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով.

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի չափով:

3. Վաճառակետերում զենքի պահպանման անվտանգության կանոնների պահպանման խախտելն առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

5. Զենքի վաճառքի գործունեության կազմակերպման լիցենզիայի պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դրանք չեն առաջացրել

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:

~~Հոդված 190. Քաղաքացիների կողմից ողորկափող որսորդական հրազեն ձեռք բերելու, պահելու, ուրիշին տալու կամ վաճառելու կարգը խախտելը~~

~~Առանց ներքին գործերի մարմինների թույլտվության քաղաքացիների կողմից ողորկափող որսորդական հրազեն ձեռք բերելը, պահելը, ուրիշ անձանց տալը կամ վաճառելը՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսուն տոկոսից մինչև դրա լրիվ չափը՝ զենքի բռնագրավմամբ կամ առանց դրա:~~

~~Նույն գործողությունները այն անձի կողմից կատարելը, որը սույն հոդվածի առաջին մասով նախատեսված խախտումներից որևէ մեկի համար մեկ տարվա ընթացքում ենթարկվել է վարչական տույժի՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի վաթսունհինգ տոկոսից մինչև հարյուր հիսուն տոկոսի չափով՝ զենքի բռնագրավմամբ:~~

~~*(190-րդ հոդվածը խմբ. 02.09.93 ՀՕ-79)*~~

«Հոդված 190. Զենք ձեռք բերելու կամ վաճառելու կարգը խախտելը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից զենք ձեռք բերելը կամ վաճառելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ զենքի առգրավմամբ կամ առանց դրա:
2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ զենքի առգրավմամբ:

~~Հոդված 191. Հրազենը և զինամթերքը պահելու կամ փոխադրելու կանոնները խախտելը~~

~~Զենք պահելու համար ներքին գործերի մարմինների թույլտվություն ունեցող քաղաքացիների կողմից ողորկափող որսորդական հրազենը և ակոսավոր հրազենն ու զինամթերքը պահելու կամ փոխադրելու կանոնները խախտելը՝~~

~~առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասը տոկոսից մինչև քսան տոկոսի չափով կամ զենքի և զինամթերքի հատուցմամբ վերցնում:~~

~~Նույն գործողությունները այն անձի կողմից կատարելը, որը սույն հոդվածի առաջին մասով նախատեսված խախտումներից որևէ մեկի համար մեկ տարվա ընթացքում ենթարկվել է վարչական տույժի՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգ տոկոսից մինչև երեսուն տոկոսի չափով՝ զենքի և զինամթերքի բռնագրավմամբ կամ առանց դրա:~~
~~Հրազենը և զինամթերքը պահելու կամ փոխադրելու կանոնները ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների այն աշխատողների կողմից խախտելը, որոնք պատասխանատու են դրանց անվթարության համար, ինչպես նաև նրանց կողմից հրազենը և զինամթերքը ոչ ըստ նպատակի օգտագործելը՝~~
~~առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսուն տոկոսից մինչև դրա լրիվ չափը:~~
~~Նույն գործողությունները այն անձի կողմից կատարելը, որը մեկ տարվա ընթացքում սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված խախտումներից որևէ մեկի համար ենթարկվել է վարչական տույժի՝~~
~~առաջացնում են տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսուն տոկոսից մինչև հարյուր հիսուն տոկոսի չափով:~~
~~*(191-րդ հոդվածը խմբ. 02.09.93 ՀՕ-79)*~~

«Հոդված 191. Զենքը կամ ռազմամթերքը պահելու, տեղափոխելու (փոխադրելու) , կրելու կամ օգտագործելու կանոնները խախտելը
1. Զենք պահելու և կրելու, պահելու և օգտագործելու, հավաքածուներ կազմելու թույլտվություններ ունեցող քաղաքացիների կողմից զենքը կամ ռազմամթերքը պահելու, տեղափոխելու (փոխադրելու), կրելու կամ օգտագործելու կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով՝ զենքի վերցմամբ կամ առանց դրա:
2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ զենքի և ռազմամթերքի առգրավմամբ:
3. Զենքը և ռազմամթերքը պահելու, տեղափոխելու (փոխադրելու), կրելու կամ օգտագործելու կանոնները իրավաբանական անձանց այն աշխատողների կողմից խախտելը, որոնք պատասխանատու են դրանց անվթարության համար, նրանց կողմից զենքը և ռազմամթերքը ոչ ըստ նպատակի օգտագործելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ զենքի վերցմամբ կամ առանց դրա:
4. Սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝
առաջացնում են տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ զենքի և ռազմամթերքի առգրավմամբ:

~~Հոդված 192. Հրազենի գրանցման (վերագրանցման) ժամկետները կամ հաշվառման վերցնելու կանոնները խախտելը~~

~~Քաղաքացիների կողմից բնակության վայրը փոխելիս հրազենի գրանցման (վերագրանցման) սահմանված ժամկետները խախտելը կամ ներքին գործերի մարմիններում այն հաշվառման վերցնելու կանոնները խախտելը՝~~
~~առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգ տոկոսի չափով։~~
~~*(192-րդ հոդվածը խմբ. 02.09.93 ՀՕ-79)*~~

Հոդված 192. Հրազենի գրանցման (վերագրանցման) ժամկետները կամ հաշվառման վերցնելու կանոնները խախտելը
Ֆիզիկական անձանց կողմից բնակության վայրը փոխելիս, իսկ իրավաբանական անձանց կողմից հաշվառման վայրը փոխելիս հրազենի գրանցման (վերագրանցման) սահմանված ժամկետները խախտելը կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում այն հաշվառման վերցնելու կանոնները խախտելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր միավոր հրազենի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով։

~~Հոդված 193. Ողորկափող որսորդական հրազենը և զինամթերքը իրացնելուց խուսափելը~~
~~Ողորկափող որսորդական հրազենը և զինամթերքը իրացնելուց այն քաղաքացիների խուսափելը, որոնց զենք և զինամթերք պահելու թույլտվությունը չեղյալ է հայտարարվել ներքին գործերի մարմինների կողմից որսորդական ընկերություններից դուրս գալու կապակցությամբ՝~~
~~առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգ տոկոսից մինչև քսան տոկոսի չափով՝ զենքի և զինամթերքի հատուցմամբ առգրավումով։~~
~~*(193-րդ հոդվածը խմբ. 02.09.93 ՀՕ-79)*~~

«Հոդված 193. զենքը և ռազմամթերքն իրացնելուց խուսափելը
Զենքը և ռազմամթերքն իրացնելուց այն քաղաքացիների խուսափելը, որոնց զենք պահելու և կրելու, պահելու և օգտագործելու, հավաքածուներ կազմելու թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվել օրենքով սահմանված կարգով՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով՝ զենքի և ռազմամթերքի առգրավմամբ»։

Հոդված 193.1. Հրաձգարան գործարկելն առանց համապատասխան լիցենզիա, իրավական ակտերի խախտմամբ կահավորելը եւ անվտանգության կանոնները խախտելը
1. Առանց լիցենզիայի հրաձգարան գործարկելն առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով։

2. Օրենսդրությամբ նախատեսված կարգի խախտմամբ հրաձգարան սարքավորելը առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:
3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:
4. Հրաձգարանում քաղաքացու կողմից զենք պահելու և կրելու, այլ անձի փոխանցելու կանոնները խախտելն առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:
5. Սույն հոդվածի չորրորդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ զենքի առգրավմամբ կամ առանց դրա:
6. Իրավաբանական անձի, իրավաբանական անձի աշխատողների կողմից հրաձգարանում, զենքի ուսուցման, պահելու և կրելու, այլ անձի փոխանցելու կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանք նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:
7. Սույն հոդվածի վեցերորդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:
8. Հրաձգարանի գործարկման գործունեության կազմակերպման լիցենզիայի պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դրանք չեն առաջացրել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:

Հոդված 193. 2. Զենքի հարդարման վերաբերյալ սահմանված նորմերը խախտելը

Զենքի հարդարման գործունեության կազմակերպման լիցենզիայի պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դրանք չեն առաջացրել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով:

Հոդված 193. 3. Քաղաքացիական և ծառայողական զենքի արտադրության վերաբերյալ սահմանված նորմերը խախտելը

Քաղաքացիական և ծառայողական զենքի արտադրության գործունեության կազմակերպման լիցենզիայի պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դրանք չեն առաջացրել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

Հոդված 264. Իրեր և փաստաթղթեր վերցնելը

Ձերբակալման, անձնական զննության կամ իրերի զննության ժամանակ հայտնաբերված իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող իրերը և փաստաթղթերը վերցվում են սույն օրենսգրքի 261 և 263 հոդվածներում նախատեսված մարմինների պաշտոնատար անձանց կողմից: Վերցված իրերն ու փաստաթղթերը ընդհուպ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը պահվում են այն մարմինների (պաշտոնատար անձանց) կողմից որոշվող տեղերում, որոնց իրավունք է վերապահված վերցնելու իրերը և փաստաթղթերը, իսկ գործը քննելուց հետո, նայած գործի քննության արդյունքներին, դրանք սահմանված կարգով բռնագրավվում կամ վերադարձվում են տիրոջը կամ ոչնչացվում, իսկ իրերը հատուցմամբ վերցնելու դեպքում իրացվում են: Ինքնաթոր օղին և տնային եղանակով պատրաստված այլ թունդ ոգելից խմիչքները, դրանց արտադրության համար ապարատները ոչնչացվում են գործը քննելուց հետո:

(մասն ուժը կորցրել է 16.05.16 ՀՕ-82-Ն)

Իրեր և փաստաթղթեր վերցնելու դեպքում այդ մասին կազմվում է արձանագրություն կամ համապատասխան նշում է արվում վարչական իրավախախտման վերաբերյալ, իրերի զննության կամ վարչական ձերբակալման վերաբերյալ արձանագրության մեջ:

(1-ին և 2-րդ նախադասությունները գործել են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը՝ 20.01.21 ՀՕ-27-Ն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն) Սույն օրենսգրքի 123-րդ, 123.1-ին, 123.3-րդ հոդվածներով, 123.4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 123.5-րդ, 123.6-րդ, 123.7-րդ, 124-րդ, 124.1-ին, 124.2-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.5-րդ, 124.6-րդ, 125-րդ, 126-րդ և 129.2-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտում կատարած՝ Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող անձանց վարորդական վկայականները վերցվում են մինչև գործով կայացված որոշման կատարումը՝ տալով տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ժամանակավոր թույլտվություն, որի մասին նշում է կատարվում իրավախախտումների վերաբերյալ արձանագրության մեջ: Ժամանակավոր թույլտվության գործողության ժամկետը երկարաձգվում է մինչև գանգատարկման համար սահմանված ժամկետը լրանալը կամ գանգատի առթիվ որոշումն ընդունելը:

(մասն ուժը կորցրել է 21.02.07 ՀՕ-73-Ն)

Սույն օրենսգրքի 173, 190 հոդվածներով, 191 ~~հոդվածի առաջին և երկրորդ մասերով~~, 192 և 193 հոդվածներով նախատեսված խախտումներ կատարելու դեպքում ոստիկանության աշխատողները իրավունք ունեն մինչև գործի քննությունը վերցնել հրազենը, ինչպես նաև ռազմամթերքը, որի մասին գրանցվում է արձանագրության մեջ՝ նշելով վերցվող զենքի մակնիշը կամ մոդելը, տրամաչափը, սերիան և համարը, ռազմամթերքի քանակն ու տեսակը: Պաշտոնեական պարտականությունների իրականացման ընթացքում իրավախախտում կատարած անձի իրերի վերցնում, անձնական զննություն և իրերի զննություն կիրառվում է միայն հետաձգում չհանդուրժող դեպքերում:

Սույն օրենսգրքի 184 հոդվածով նախատեսված խախտումներ կատարվելու դեպքում ոստիկանության աշխատողները իրավունք ունեն վերցնելու ԽՍՀՄ շքանշան, մեդալ, պատվավոր կոչման կրծքանշան, շքանշանների ժապավեններ և մեդալների

շերտաձողիկներ կամ Հայաստանի Հանրապետության, մյուս միութենական կամ ինքնավար հանրապետության պետական պարգև և դրանց կրծքանշաններ: Գործը քննելուց հետո իրավախախտողից վերցված ԽՍՀՄ շքանշանը, մեդալը, պատվավոր կոչման կրծքանշանը, Հայաստանի Հանրապետության, մյուս միութենական կամ ինքնավար հանրապետության պետական պարգևը, ինչպես նաև դրանց կրծքանշանները ենթակա են վերադարձման դրանց օրինական տիրոջը, իսկ եթե նա հայտնի չէ, ուղարկվում են համապատասխանաբար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահություն, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահություն, միութենական կամ ինքնավար հանրապետության Գերագույն խորհրդի նախագահություն:

(264-րդ հոդվածը խմբ. 30.09.87, 10.03.90, լրաց., փոփ. 21.02.07 ՀՕ-73-Ն, 07.02.12 ՀՕ-2-Ն, փոփ. 21.12.15 ՀՕ-178-Ն, 16.05.16 ՀՕ-82-Ն, 09.12.19 ՀՕ-300-Ն, խմբ. 20.01.21 ՀՕ-27-Ն, փոփ. 09.06.22 ՀՕ-155-Ն)

(20.01.21 ՀՕ-27-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՁԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» (*Պ-350-02.08.2022-ՊԱ-011/1*) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	Առաջարկ (փոփոխություն, լրացում)	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկի ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)	«Ձենքի շրջանառության կարգավորման մասին» Պ-350-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)	«Որսի եւ որսորդական տնտեսության վարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Պ-350^{2}-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)	«Գովազդի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Պ-350^{3}-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	Ընդունվել է	Ընդունվել է

4.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Հիդրոօդերեւութաբանական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Պ-350[4]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
5.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Ինկասացիայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Պ-350[5]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
6.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-350[6]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
7.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-350[7]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
8.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին Պ-350[8]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
9.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ**	«Ռազմարդյունաբերական համալիրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-350[9]-02.08.2022-ՊԱ-011/1օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**

10.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ**	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին Պ-350[10]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
11.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Պետական տուրքի մասին» Պ-350[11]-02.08.2022-ՊԱ-011/0 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
12.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին Պ-350[12]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
13.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-350[13]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**
14.	**Պատգամավոր Վիլեն Գաբրիելյան (հեղինակ)**	«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին Պ-350[14]-02.08.2022-ՊԱ-011/1 օրենքի նախագծում կատարվել են մի շարք խմբագրական փոփոխություններ և հեղինակի կողմից ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը:	**Ընդունվել է**	**Ընդունվել է**